ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԵԼՄԵՏ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/137 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Չափերը: 1900x730x840մմ Կառուցվածքը՝ Հենարանային ոտքեր - 3 հատ; կապակցող մասեր - 4 հատ; փայտաձողեր - 23 հատ; ներկառուցված տարր - 6 հատ: Արտաքին տեսքը համաձայն նկարի: Նստարանի շրջանակը բաղկացած է 5 մմ հաստությամբ թիթեղից պատրաստված երեք հենարանային կոր ոտքերից, որոնք փոխկապակցված են 20x40x2 մմ չափերով մետաղական պրոֆիլից պատրաստված չորս կապերով, եռակցված են: Կոր հենարանային ոտքերը ամրացված են լրացուցիչ հենարաններով, որոնք նույնպես պատրաստված են մետաղական պրոֆիլից՝ 20x40x2 մմ չափերով: Նստարանի փայտաձողերի ամրացման տակ և հենարանային մասի ստորին եզրի երկայնքով տեղադրված է 4 մմ հաստությամբ մետաղական ժապավեն՝ փայտաձողերի ամրացման անցքերով: Նստարանի փայտաձողերը պատրաստված են փայտե գերանից՝ 35x45 մմ չափերով և 12% խոնավությամբ: Փայտաձողերը բոլորը մշակված և հարթեցված են, եզրերը կլորացված են, կլորացման շառավիղը բառնվազն 3 մմ: Մշակված մակերեսները ծածկված են մգեցված և անգույն լաքով: Ներկառուցված տարրերը պատրաստված են 26,8 մմ տրամագծով մետաղական կլոր խողովակից և ունեն 300 մմ ընդհանուր երկարություն: Վերին ծայրին եռակցվում է 5x50x130 մմ 11 մմ տրամագծով երկու անցք ունեցող մետաղական թիթեղ, իսկ ստորին ծայրին՝ բետոնապատման համար 5x50x100 մմ թիթեղ: Մետաղից պատրաստված բոլոր տարրերը պետք է մշակվեն, յուղազրկվեն և ներկվեն պոլիմերային փոշի ներկով RAL 7012 (մոխրագույն) կամ համարժեքով:: Բոլոր ամրակները ցինկապատ են: Տեղադրում կատարվում է DIN 603 M6x50 և DIN 912 M10x25 ամրակներով՝ ներկառուցված տարրերի բետոնապատմամբ: Տեղադրումը կատարվում է մատակարարի կողմից: Անհրաժեշտ է

	տրամադրել համապատասխանության հավաստագրեր արտադրողի բնօրինակ կնիքով: Երաշխիք 1 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО БЕЛМЕТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/137 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	